ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 58 -Ա

« 22 » ՄԱՐՏԻ 2023թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-Ի N 22 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսապահովման կարգը հաստատելու» թիվ 824-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները՝

Որոշում եմ

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի ապրիլի 2-ի N 22 որոշմամբ հաստատված «Վայոց ձորի մարզի տարահանված բնակչության կենսապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների» պլանում կատարել հետևյալ փոփոխությունները:

1.1. Պլանի 2-րդ գլխի 4-րդ կետում «5991» թիվը փոխարինել «5990» թվով:

1.2. Պլանի 1, 2, 5, 7 հավելվածներում ճշտել բոլոր թվային տվյալները:

1.3. 8-րդ հավելվածում ճշտել Վայոց ձորի մարզի կենսապահովման համակարգի օբյեկտների և նրանց հնարավորությունների վերաբերյալ տվյալները:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Դ.Սարգսյանի վրա:

3/22/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք.Եղեգնաձոր